



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 10 ՓԵՏՐՈՒԱՐ, 2014

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս զիս. եւ ողորմեալս քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

Աստու 94

ԱՍՏՈՒԱԾ ԲՈՂՈՐԻՆ ԴԱՏԱԻՈՐԸ

Արդարահատոյց Աստուած, ցոյց տուր արդարութիւնդ:
Մինչեւ ե՞րբ, Տէր, մինչեւ ե՞րբ ամբարիշտները պիտի յոխորտան,
չարագործները գոռոզ խօսեցնով պիտի արտայայտուին,
եւ իրենց չարիքներով պիտի հպարտանան:
Քու ժողովուրդդ կը նզմեն, ո՛վ Տէր,
կը չարչարեն ղեզի պատկանողները,
այրիներն ու պանդուխտները կը սպաննեն, եւ որբերը կը կոտորեն, ըսելով.
«Տէրը չի տեսներ, մեր հայրերուն Աստուածը
այս բաներուն ուշադրութիւն չի դարձներ»:
Յիմար մարդիկ, հասկցէ՛ք, դու՛ք՝ անմիտներ, ե՞րբ պիտի սորվի՛ք:
Ան՝ որ ականջը ստեղծեց՝ ին՛ք չի՞ լսեր,
ան՝ որ աչքը գոյացուց՝ ին՛ք չի՞ տեսներ:
Երանի՛՜ այն մարդուն, ո՛վ Տէր, որ դուն ին՛ք կը սրբագրես,
եւ Օրէնքովդ կը դաստիարակես:
Տէրը չի մոռնար իր ժողովուրդը,
բնաւ չի լքեր անոնք՝ որոնք իրեն կը պատկանին,
մինչեւ դատաստանի մէջ արդարութիւնը վերահաստատուի,
եւ սրտով ուղիղները արդարութեան հետեւին:

ՇԱՐԱԿԱՆ ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէլոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՅԱԿՈՒ ԼԱԲԱՆԷՆ ԿԸ ՓԱՆՉԻ (31:1-42)

«Յակոբ մեր հորը բոլոր ունեցածը առաւ ու բոլոր այս հարստութիւնը մեր հորը սրացուածքէն սրացաւ»: Հերաբրբրական է մարդ արարածի նկարագիրը: Յանկարծ ինչպէ՛ս մէկ պահէն միւսը կը փոխուի: Նախապէս այսպէս արտայայտուած էր Լաբան. «Փորձով գիտցայ, որ Տէրը քեզի համար զիս օրհնեց»: Եւ հիմա ահա Յակոբի յաջողութիւնը նախանձ է որ կ'արթնցնէ Լաբանի գաւակներուն մէջ, եւ այդ նախանձը կը փարածուի հասնելով մինչեւ Լաբանին, եւ ան բոլորովին կեցուածքն ու վերաբերմունքը կը փոխէ Յակոբի նկարմամբ:

Ի րես այս երեւոյթին, Տէրը կը հրամայէ Յակոբին որ վերադառնայ «իր հայրերուն երկիրը եւ ես քեզի հետ պիտի ըլլամ»: Այս մէկը կը հաւաստիացնէ, որ Տիրոջ ներկայութիւնը Յակոբի կեանքին մէջ երբեք ալ փեղի հետ կապուած չէ, այլ՝ ուր որ Տէրը ինք կ'ուզէ որ Յակոբը երթայ ինք միշտ անոր հետ է: Ահա Աստուծոյ փութ խոստումին ճշմարտացիութիւնը:

Յակոբ, սակայն, կ'ուզէ նաեւ փեղեակ պահել իր կիները, որպէսզի անոնք եւս անմասն չմնան առնուելիք որոշումէն: Անոնք, ընդհակառակը, Յակոբին կողքին կ'ըլլան, ըսելով. ոչ միայն քեզ խաբեց, այլ՝ «մեզ ալ ծախեց ու մեր սրակն ալ բոլորովին կերաւ»:

«Ռաբէլ իր հորը կուռքերը գողցաւ»: Հերաբրբրական նախադասութիւն մըն է, որուն բացատրութիւնը կարելի է այսպէս հասկնալ: Առաջին հերթին կուռքերու հասկացողութիւնը անցեալի: Անցալին քանի մը րեսակի կուռքերը կային, ընտանեկան, փեղայնական եւ ընդհանրական: Ընտանեկան, որ կարծէք յարուկ էր միայն այդ ընտանիքին: Տեղայնական, յարուկ փեղի մը հետ կապուած: Իսկ ընդհանրական, կարծէք շատ աւելի ընդհանուրին կողմէ ընդունուած: Այս պարագային Ռաբէլ իր հորը կուռքերը գողցաւ, ընտանեկան կուռքեր էին, որոնք Լաբանի համար ապահովութիւն, պաշտպանութիւն կու տային: Ուրեմն, Ռաբէլ կարծէք ուզեց այդ կուռքերը գողնալով, Լաբանին անօգնական ձգել: Եւ կամ կարծէք այդ կուռքերը ձեռով մը իրենց օգնական ըլլային: Այս բոլորէն, սակայն, Յակոբը փեղեակ չէր, որովհետեւ եթէ երբեք փեղեակ ըլլար պիտի չ'արտօնէր Ռաբէլին որ այդպիսի բան մը ընէ:

Ահա երբ Լաբան կ'իմանայ Յակոբի փախուստը եօթը օրուան ճամբայ կը կտրէ անոր հասնելու: Ահա երազին մէջ Տէրը կը յայտնուի ըսելով. «Զգոյշ կեցիր որ Յակոբին աղէկ կամ գէշ չխօսիս»: Ահա ազդարարութիւն մըն է որ կը փրուի Լաբանին, ոչ թէ պարզապէս Յակոբին վնաս հասցնելու, այլ ինք եւս չարիքի մէջ չ'իյնալու:

Հակառակ այս ազդարարութեան, Լաբան ճիշդ է գգոյշ է իր արտայայտութեան մէջ, սակայն կեղծաւոր: «Ինչո՞ւ փախչիլդ գաղտուկ պահեցիր եւ ինձմէ փախար ու ինձի չիմացուցիր, որ ես քեզ ուրախութեամբ ու երգերով, թմբուկով ու քնարներով դրկէի»: Միւս կողմէ, Լաբան նաեւ կը խոստովանի թէ Տէրը այցելեց իրեն եւ ազդարարեց, որպէսզի գգոյշ ըլլայ Յակոբի նկարմամբ:

Հակառակ այս ճշմարտութեան, հակառակ Աստուծոյ երեւումին, Լաբան փակաւին կը փնտրէ իր աստուածները: Լաբան, որ նախապէս խոստովանած էր, որ Տէրը զինք օրհնեց, բայց փակաւին կը փնտրէ այն կուռքերը, որոնք անխօս են ու չեն լսեր: Ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ. «երբ փակաւին հեթանոս էիք, կը փարուէիք անբան ու անխօս կուռքերէ» (Ա Կորնթ 12:2):

Յակոբ այս բաներէն փեղեակ չէր, որովհետեւ Ռաբէլ գաղտնաբար ըրած էր: Բայց դիտեցէք, ինչպիսի աստուածներ են, որ Ռաբէլ անոնց վրան նստած բայց ձայն չեն հաներ: Որովհետեւ անոնք ոչ կը լսեն, ոչ կը րեսնեն, եւ ոչ ալ կը խօսին: Ահա այս հարուածը մեզի կը սորվեցնէ, թէ որուն պէտք է ապաւինիլ, աստուածներու, կուռքերու, որոնք ոչ կը րեսնեն, ոչ կը լսեն եւ ոչ ալ կը խօսին, թէ Աստուծոյ մը, որ կը րեսնէ, կը լսէ, կը խօսի ու կը պարասխանէ, ու մանաւանդ Իրն է վրէժխնդրութիւնը (Բ Օր 32:35): «Աստուած իմ փառապանքս ու իմ ձեռքիս աշխատութիւնը րեսաւ եւ երէկ զիշեր քեզ յանդիմանեց» (31:42):